

ՍԵՐԴԱԿ ԱՄԻՐՑԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ

(Կաթողիկոսության սկզբնափուլը)

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին և Յրա ազգանվեր գործունեությանը նվիրված հիմնարար ուսումնասիրությունները դեռ առջևում են: Այն, ինչ արվել է առ այսօր այդ ուղղությամբ, քիչ չէ, բայց պակասապէտ է: Սովոր հոդվածով մենք ուզում ենք բացել նոր՝ այժմեական, վերլուծական ուսումնասիրությունների ծիրը, փորձելով լուսաբանել Վազգեն Առաջինի կաթողիկոսության սկզբնափուլի մի քանի հիմնախնդիրները, որոնց լուծմանը կաթողիկոսական գամբ ստանձնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ Վեհափառը՝ այն հովով կարևոր ժամանակաշրջանում (Հնայած Հայոց համար բոլոր ժամանակներն ել հովով կարևոր են եղել), որով աչքի էր ընկնում Մեծ Բոհնակալի մասից հետո սկսված բեկումնային փուլը:

1955 թ. սեպտեմբերի 30-ին Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն Եպիսկոպոս Պալճանին, ում վիճակվեց դառնալ դեպի մայրամուս թերվող ամբողջատիրական համակարգի հարուցած դառնությունների վերջին կրողը: Վազգեն Առաջինը միաժամանակ այն երշանիկ Հայրապետն էր, որը Հայաստանի ալճքան երազած անկախության վերականգնման ականատեսն ու մասնակիցը եղավ:

Հանրահայտ է, որ Ռուսաստանում խորհրդային կարգերի արշավույսին քաղաքական իշխանության եկած բոլշևիկների կողմից ընդունված՝ հոգևոր հաստատությունների, կրոնի և պետության փոխարարերությունները կանոնակարգող դեկրետները և, մասնավորապես, խոճի ազատության, Եկեղեցին պետությունից անջատելու մասին, այդպես էլ մնացին թղթի վրա:

Հայաստանում ևս խորհրդային կարգեր հաստատվելու առաջին օրերից Եկեղեցին դրվեց հզոր պետական մամլիչի տակ և Եկեղեցա-կրոնական բոլոր գործներացներն ուղղվեցին նույն հունով, ինչ հունով արդեն երեք տարի ընթանում էին հետհեղափոխական Ռուսաստանում:

Այլ կերպ չեր կարող լինել, եթե Ակատի առնենք, որ այստեղ հաստատվել էր նույն քաղաքական ուժը, արմատավորվել նույն գաղափարախսությունը, գործողության մեջ էին դրվել նույն ուժային լծակները. Կիրառվում էին նույն մեթոդներն ու ձևերը:

Դրությունը փաստորեն չփոխվեց և Ստավինի մասից հետո, այսպես կոչված՝ «խրուշչովյան ձեմիա»-ի տարիներին: Զնայած որոշակի լիբերալացման քաղաքականությունն ակնհայտ էր:

Պետության վերահսկողությունը Եկեղեցու Ակատմամբ Վազգեն Առաջինի կաթողիկոսության հայսաշեմին հասել էր այնպիսի ծայրափելության, որ ՀԵԳԻ-ի նախագահը փաստորեն ստանձնել էր անգամ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի դերը: Նա «իր սեփական

ձեռքով ուղղումներ էր կատարում տեքստում, մակագրություններ անում շարելու հանձնը՝ պատճենում, ստորագրում էր շարվածայունները տպագրության, կատարելով այդ ամենը խմբագրության փոխարեն:

Այս մասին մատնանշում էր ոչ այլ որ, քան ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի (ԿՊ ԳԽ) նախագահ Պոլյանսկիի¹:

Վազգնն Առաջին ստացած ժառանգությունը նույնաբան ծանր էր, որքան նրա նախորդինը՝ Գևորգ Չառողիկոսինը: Դրույթումը ոչ միայն չէր փոխվել, այլև ինչ-որ տեղ ավելի էր վատթարացել: Տարիների ընթացքում լուծման կարոտ խնդիրները չլուծվելով՝ ավելի էին խորացել: Դրանց ավելացել էին նորերը: Տագնապալի վիճակ էր ստորագրել եկեղեցական թեմերում, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Գրեթե կտրվել էր կապը նրանց հետ: Տեղ-տեղ այդ թեմերը հասել էին չգոյության: 1952 թ. հունիսի 21-ից, Գարեգին Ա Հովհաննիսի մամից հետո, թափուր էր մնացել Մեծի Տաճան Կիլիկիո Կաթողիկոսական գահը: Նոր Կաթողիկոսի ընտրության խնդիրը մեծ ճգնաժամի էր վերածվել: Բուն Մայր Աթոռում կազմակուծվել և գրեթե չէին գործում ամենաանհրաժեշտ կառուցմերը, չկային հոգևոր սպասավորներ, չկային նյութական միջոցներ...

Էական փոփոխություններ չէին եղել նաև Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքշյանի՝ Ստալինի հետ 1945 թ. ապրիլի 19-ի համդիպումից հետո:

Այդ մասին վկայում էր անգամ ՀԵԳԽ-ի նախագահ Հ. Գրիգորյանը՝ ՀԽՍՀ կառավարության ներկավարությանը 1956 թ. մարտի 2-ին ներկայացրած տեղեկանքում.

«1945 թ. Կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքշյանը (հետագայում Գևորգ VI կաթողիկոս) ընդունվեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիտարների խորհրդի նախագահ Ի. Վ. Ստալինի կողմից: Ընդունելության ժամանակ Չորեքշյանը ԽՍՀՄ կառավարության քննարկմանը ներկայացրեց գրավոր մի շարք խնդրանքներ: Ի. Վ. Ստալինը դրականորեն վերաբերվեց նամակում շարադրված հայցերին և հենց տեղում մակագրեց՝ «Համաձայն եմ»: Այդ փաստաթյուրը Ի. Վ. Ստալինի մակագրությամբ լայնորեն գովազդվեց, հատկապես արտասահմանյան հայ մամուլում, որպես Եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանության բարեհան վերաբերումքի փաստ:

Սակայն այդ նամակի մի շարք կետեր, չնայած պաշտոնապես լուծում էին ստացել, գործնականում առ այսօր չեն իրականացվել:

Այդպիսին է մնում մասնավորապես վաճառապատկան շինությունների հարցը, որոնք պաշտոնապես հանձնվել են Էջմիածնին, իսկ գործնականում առ այսօր չեն ազատվել մասնավոր բնակիչների, կազմակերպությունների և գորամասերի կողմից, որոնք գրանեցրել են այդ շինությունները»²:

Հայ Եկեղեցու վոր հակողություն իրականացնող պետական այրը խոստովանում էր, որ այդ հարցը տեղի էր տվել նաև անհեթեռությունների: Էջմիածնից ամեն տարի Ակադ

¹ ՆՊԱ, ֆ. 823, գ. 3, գ. 95, թ. 20:

² ՆՊԱ, ֆ. 823, գ. 3, գ. 110, թ. 10:

Էին զանձել պետական հարկ ու տուրք հենց այդ շինուալիսների և շնորհերի դիմաց, որոնցից նա փաստորեն չէր օգտվում³:

«Անշուշտ նորմալ չի, - գրում էր նա, - եթե Վաճքի ներքին բակալիա տարածքում, այն եւ Մայր Տաճարի և Կաթողիկոսի նատակայրի, գտնվում են մասնավոր բնակչութեր, պետական հիմնարկներ, առավել ևս զորամասեր: Մանավանդ ցանկալի չէ վերջիններիս առկայությունը, քանզի Էջմիածնի Մայր Տաճարը, որպես Հայաստանի բացառիկ հուշարձաններից մեկը, այցելում են առանց բացառության Հայաստան ժամանող արտասահմանյան բոլոր պատվիրակություններն ու գրուաշխիկները»⁴:

Տեղեկանքում այնուհետև նշվում էր, որ Վիճակը նույնն է նաև տպարանի հարցում: Էջմիածնի տպարանի բացման թույլտվությունը նույնական տվել էր անձամբ Ստալինը, իսկ տպարանի շենքը շարունակում էր օգտագործվել պետական հիմնարկների կողմից:

«Էջմիածնի Կաթողիկոսարանում գործերի վիճակի ծայրամեջ վատթարացման մասին»⁵ ՀԵԳԽ-ի նախագահը հաղորդում էր և մինչև այդ՝ Վազգեն Առաջինի գահակալությանը նախորդող տարիներին, օրինակ, 1953 թ. նեկտոնքներին ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ա. Թովմայանին հասցեազրած ընդարձակ գեկուցագրում.

«... Մինչև հեղափոխությունը Էջմիածնի միաբանությունը կազմված էր 300 մարդուց, այդ թվում 20-30 եպիսկոպոսից: Ներկայում Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսից բացի, որն 85 տարեկան է, կան միայն երկու եպիսկոպոսներ...»⁶: Վերջինների տարիքը, համաձայն մեկ այլ փաստաթղթի, 70-ից բարձր էր⁷:

«Նախքան հեղափոխությունը ԽՍՀՄ ներկա տարածքում Էջմիածնն ուներ մինչև 900 հայկական եկեղեցի, այժմ դրանց թիվը չի անցնում 30-ից: Նշված թեմերից յուրաքանչյուրը իր կազմում ունի 2-3 եկեղեցի, ասիմանական թվով հոգևորականներով... այդ, այսպես կոչված, թեմերը խնճալի գոյություն են քարշ տալիս...»⁸:

Երկու տարի անց, նույնի մասին ցավով գրում էր նաև Վազգեն Առաջինը՝ ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին հոյած իր նամակում: Նա նշում էր, որ Աղորենշանոս ապրում է կես միլիոն հայ, իսկ գործում է ընդամենը երեք եկեղեցի: Նույն է Վիճակը Վրաստանում, որտեղ ապրում է ավելի քան 400 հազար հայ⁹:

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո Վազգեն Առաջինը, ծանոթանալով Մայր Աթոռի ֆինանսական կացությանը, արտառոց փաստի և համբիպում: ԽՍՀՄ ֆինանսների նախարարության ոմն վերաքննիչ, դեռևս 1954 թ. այցելելով Հայաստան, ստուգել էր նաև Էջմիածնի Կաթողիկոսարանի հաշվապահական գործերը և ֆինանսական «զանցանքներ» էր հայտնաբերելու: Կաթողիկոսարանի կողմից 1953-1954 թթ. ընթացքում

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, թ. 11:

⁵ Նույն տեղում, գ. 69, թ. 31:

⁶ Նույն տեղում, թ. 8:

⁷ Նույն տեղում, գ. 6, թ. 11:

⁸ Նույն տեղում, գ. 3, գ. 69, թ. 9:

⁹ Նույն տեղում, գ. 113, թ. 4:

պատրիառքած մոմերի վաճառքից եկեղեցիների ստացած 1.500 հազար ոուրիշ եկամարդու արտադրական եկամուտ, նա պահանջել էր հանրապետության ֆինանսական մարմիններից հարկադրել Էջմիածնի Կաթողիկոսարանը 1.200 հազար ոուրիշ չափով:

Էջմիածնի Կաթողիկոսարանը ոչ ճիշտ, կամայական կերպով հարկելու վերաբերյալ Վազգեն Առաջինը բողոքի երկու համակ է հասցեազրում ՀԵԳԽ-ի նախագահին: Պատմասիրելով հարցը, վերջին 1956 թ. մարտի 3-ին համապատասխան զեկուցազիր է ներկայացնում ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Ե. Քոչինյանին:

«Անհրաժեշտ եմ գտնում հայտնել,- ապաս էր զեկուցազրում,- որ եկեղեցիներում մոմերի վաճառքը չի կարելի համարել արտադրական եկամուտ, քանի որ եկեղեցիներում գնված մոմերի արժեքը... հանդիսանում է հավատացյալների կողմից եկեղեցու ծախսերը հոգալու համար հատկացված գումար: Հենց դա է հանդիսանում Էջմիածնի Կաթողիկոսարանի դրամական մուտքերի գործեն միակ աղբյուրը (բոլոր միջոցների 90՝ ոուկոսը)... Անգամ այս մուտքերի առկայության պայմաններում Էջմիածնի Կաթողիկոսարանը ի վիճակի չէ ծածկել իր բոլոր ծախսերը, և պարերաբար նրա բյուջեում ճեղքածք է առաջանում, որը փակելու համար Կաթողիկոսը նախկինում դիմել է Ալեքսի Պատրիարքի և Կառավարության օգնությանը»¹⁰:

Չափազանց ծանր էր առև Մայր Աթոռի ֆինանսական դրությունը: Հ. Գրիգորյանի վերոհիշյալ զեկուցազրում բերվում էին հետևյալ տիտոր փաստերը. «Որպեսզի Կարողանա ապահովել... իր տարեկան ծախսերի նպագագունը, Կաթողիկոսը ատիպված է եղել 1950 թվականին վաճառել իր պատրիարքական արժեքների մի մասը: Էջմիածնի ֆինանսական դրությունն այնքան աղետովի է, որ եթե մինչև այս տարվա վերջը Կաթողիկոսը չստանա լուրը ֆինանսական աշակեցություն, նա պարտադրված կլինի... փակել հոգևոր ճեմարանը և Էջմիածնի ամսագիրը»¹¹:

Օքյեկտիվորեն այս և այլ կարգի բազում հիմնախնդիրներ էին դրված Վազգեն Առաջինի աշխատանքային օրակարգում գործունեության առաջին իսկ օրից: Բոլորը՝ հոված կարուոր, բոլորը՝ կենսակամուրեն անհրաժեշտ, ոչ թե Էջմիածնի ներ եսակենտրոն շահերի, այլ հայ ժողովրդի գոյապահպաննան ու ազգապահպաննան, ազգային ու հոգևոր դիմագծի և կերտվածքի պահպանման տեսանկյունից, մի սրբազան պարտականություն, որից նա ոչ մի կերպ չէր կարող հրաժարվել խորհրդային վարչակարգի ամենաբիշտ ճնշումների պայմաններում անգամ:

Այդ հիմնախնդիրների լուծման հիմնական բանալին, սակայն, Էջմիածնի ճեղքում չէ, որ գտնվում էր, այլ խորհրդային իշխանությունների, շարքայինները, վերը բերված օրինակի կարգի, համրապետական, մյուսները՝ կրեմլի: Նման դերակատարման պայմաններում Էջմիածնի թողնվել էր խնդրատոփի դերը: Եվ Մայր Աթոռը՝ հանձին Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այդ դերը պարտադրված կատարում էր խորհրդային կարգերի գոյու-

¹⁰ Նոյն տեղում, թ. 19-20:

¹¹ Նոյն տեղում, գ. 69, թ. 9, 13-14:

թյան 70 երկար ու ձիգ տարիների ընթացքում: Այդ երրոր բաժին ընկավ նաև Վազգեն Առաջինին:

Էշմիածնից անվերջ հոսքով խնդրագրեր էին ուղղվում իշխանություններին, որոնց գերակշիռ մասը մնում էր անարդյունք: Ժամանակ առ ժամանակ կաթողիկոսի բարձրացրած հարցերը, անցմելով Հեթիւ-ի գրաբնությամբ, ուղեկցվելով դրանց վերաբերյալ կարծիքներով, բացատրագրերով, տեղեկանքներով ու մեկնաբանություններով, վերաբերյալ հանրապետության և ԽՍՀՄ իշխանությունների բարձրագույն մարմիններին, ինչ-ինչ հարցերի վերաբերյալ մասնակի որոշումներ էին կայացվում, բայց արմատական նշանակության հիմնախնդիրները շարունակում էին մնալ չլուծված:

Վազգեն Առաջինի կաթողիկոսության առաջին մի քանի տարիներին՝ Մայր Աթոռի և անձամբ կաթողիկոսի հեղինակած այս բնույթի փաստաթղթերի թիվը փոքր չէ: Դրացից յուրաքանչյուրը կատարելով պատմական սկզբնադրյուրի իր դերը, յուրովի լուս է սփռում Վազգեն Առաջինի գործունեության այս կամ այն կողմի, այս կամ այն հարցի լուծման նկատմամբ նրա մոտեցումների վրա, թույլ է տալիս ինչ-որ չափով վեր համեզու Եկեղեցի-պետություն փոխարարելությունների որոշ ծալքերն առանձին վերցրած ժամանակահատվածում և վերջին հաշվով օգնում ըստ հնարավորին լուսաբանելու այդ հարաբերություններն իր ամբողջության մեջ:

Բայց դրանց թվում կան նաև այնպիսիներ, որոնք իրենց նշանակությամբ, բովանդակած տեղեկատվության կարևորությամբ, ժամանակին ունեցած իրենց դերակատարությամբ ու հետևանքներով պատմական եզակի փաստաթղթերի շարքը կարող են դասվել:

Այս կարգի մեկ-երկու փաստաթղթերի վերլուծությունը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել Վազգեն Առաջինի 40-ամյա կաթողիկոսության սկզբափովի, նրա մտածումների, ծրագրերի, գործերի ու գործառնության, Հայ Եկեղեցու տագնապահարուց վիճակի ու այդ վիճակը շտկելուն ուղղված կաթողիկոսի համար ջանքերի, պետություն-Եկեղեցի հարաբերության հայտնի ու անհայտ երևոյթների մասին:

Վազգեն Առաջինի գործունեության առաջին տարիներին վերաբերող այս բնույթի փաստաթղթերից են ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահներ, Ն. Ա. Բոլգանինին և Ն. Ս. Խորչչյանի հասցեազրած նրա նամակները, Ն. Ա. Բոլգանինի հետ կաթողիկոսի հանդիպմանն առնչվող նյութերը:

Նորընծա Կաթողիկոսը շատ լավ հասկանում էր, որ Էշմիածնի հիմնախնդիրները լուծել համրապեսության իշխանությունների միջոցով՝ նախկինի պես անհնար էր: Զերմ ցանկության դեպքում անգամ Խորհրդային Հայաստանի նեկավարությունն առանց Կենտրոնի թույլտվության՝ կարևորություն ներկայացնող ոչ մի հարցի վերաբերյալ վերջնական վճիռ կայացնել չէր կարող: Եվ Վազգեն Առաջինը պարտադրված էր գնալ իր նախորդի նախապարհով՝ ճգնել անձնական հանդիպման ԽՍՀՄ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Նախարարների խորհրդի նախագահի հետ: Մանավանդ, որ այդ աթոռը զբաղեցնող Ն. Ա. Բոլգանինը լավատեղյալ էր Էշմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների մանրամասներին և «Սուրբ Էշմիածնում գումարուած Հայ ազգային-Եկեղեցական ժողովը լաջողութեամբ իր աշխատանքները աւարտելուց» և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելուց հետո, ինչն գրան էր հասցեազրել Հայ ազգային-Եկե-

ղեցական ժողովի խոր երախտիքի արտահայտությամբ հեռագիրը, որում մասնավորապես ասված էր. «Ցանձին Զեզ իր ամենաբարի մաղթաճքները հղելով Սովետական բարեխնամ կառավարութեանը, Ազգային-եկեղեցական ժողովը շնորհակալութիւն է յայտնում այն դիւրութիւնների համար, որ ընձեռնեց Սովետական կառավարութիւնը մեր ժողովի գումարման համար»:

Հաստատակամ իր դարաւոր աւանդութիւններին, Հայ Եկեղեցին, առաջնորդ ունենալով իր նորընտիր Կաթողիկոսին, այսուհետև նոյն եռանդով կը պայքարի բոլոր ժողովորդների միջև եղբայրութեան, նորանց երջանիկ ապագայի, ամբողջ աշխարհում խաղաղութեան գործի հետագա ամրապնդման համար, մի գործ, որն այնքան յաջողութեամբ գլխաւորում է Սովետական Միութիւնը»¹²:

Որոշումը կայացվել էր: Բայց այն իրականություն դարձնելու համար, ի տարբերություն Վազգեն Առաջինի նախորդի, անոնչի դժվարություններ էր անհրաժեշտ հայթահարել: Քանզի Ստալինի հետ Չորեքշյանի հանդիպումը կայացել էր վերևների նախաձեռնությամբ, այնինչ Բովզամինի հետ Կաթողիկոսի համեյաման նախաձեռնությունը գալիս էր մերքից:

Այսուհամերձ, Վազգեն Առաջինին հաջողվում է իրականացնել իր ծրագիրը: Ըստ որում թե՛ հանդիպումը նախապատրաստելու և թե՛ այն անցկացնելու ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես է բերում մեծ դիվանագետին պատիվ բերող ճկումություն: Ինտուիցիոն:

1956 թ. փետրվարին, Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերը այցելելու նպատակով, ուղևորության պատրաստվող Կաթողիկոսն ընդունելության համար դիմում է Բովզամինից: Պահը ճիշտ էր ընտրված: Նոր էր պարտել իր աշխատանքները ԽՄԿԿ ՀԿ համագումարը, որը, ի թիվս այլ հարցերի, քննարկել էր Ստալինի անձի պաշտամունքի և նրա հետևանքների հայթահարման մասին հարցը: Անհատի պաշտամունքը մերկացնող Ն. Ս. Խորոչչյովի գլխավորած խորհրդային նոր վարչակազմը չէր կարող ընդուածել Հայ Եկեղեցու ղեկավարի ցանկությանը, ում դրանից տասնմեկ տարի առաջ չէր զլացել ընդունելու նոյն այն Աճիատը, որի պաշտամունքը դատապարտեց ԽՄԿԿ համագումարը:

Բովզամինին հանձնվելիք Կաթողիկոսի նախապատրաստած նամակը, իրարկե, նախապես անցավ Խորհրդային Հայաստանի իշխանությունների և ամենից առաջ՝ ՀԵԳԽ-ի գործընկալության բովով: ՀԵԳԽ-ի նախագահը 1956 թ. մարտի 2-ի գրությամբ հայտնում էր ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Բ. Մարտիրոսյանին.

«Սույն կից ներկայացնում եմ Կաթողիկոս Վազգեն Առաջինի նամակի նախագիծը, որը նա ցանկանում է ներկայացնել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ ընկ. Ն. Ս. Բովզամինին, երբ ընդունվի վերջինին կողմից:

Կից ուղարկում եմ նաև Բիշյալ նամակի վերաբերյալ իմ կողմից կազմված տեղեկանքը և հարցերի նախական պատճեան, որոնք նա պատրաստվում էր շարադրել Վերոնիշյալ նամակում: Այդ սխեմայում կա այն Եկեղեցիների և վանքերի ցանկը, որոնց բացման մասին

¹² Նոյն տեղում, գ. 91, թ. 71:

ցամկանում էր խնդրել Կաթողիկոսը իր նամակում և հետո հանեց նամակից մեր հանձնարականով՝¹³:

Վազգեն Առաջինի գրաքննությունն անցած նամակն ի վերջո պատրաստ էր: Նրա խնդրանքը ընդունելության վերաբերյալ չի մերժվում: Միայն թե Բովգանինի առաջարկով ընդունելությունը նշանակվում է ոչ թե Կաթողիկոսի արտասահման մեկնելուց առաջ, ինչպես առաջարկել էր Վազգեն Առաջինը, այլ վերադարձից հետո:

Համեմատում կայացավ 1956 թ. մայիսի 12-ին: Համեմատման մասնակցում էին նաև Հեգիս-ի նախագահ Գրիգորյանը և նրա անմիջական ղեկավարը Կենտրոնից՝ ԿՊԳԽ-ի նախագահ Պոլյանսկին: Առաջինը որպես թարգմանիչ, երկրորդը՝ արձանագրող:

Բովգանինի հետ հանդիպման գրուցի արձանագրության¹⁴ ծանոթությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ երկու կողմերն ել լավ էին նախապատրաստվել հանդիպմանը, հատկապես Վազգեն Առաջինը: Ողջ գիտակցական կյանքը Ռումինիայում ապրած և ընդամենը յոթ ամիս խորհրդային կարգերի պայմաններում, այն ել հիմնականում Մայր Աթոռուի շրջափակում, անցկացրած Ամենայն Հայոց Հայրապետություն հասցրել էր տիրապետել կոմունիստական գաղափարաբանության զինանցի հիմնական մեթոդներին ու ձևերին և ըստ անհրաժեշտի դիմում էր դրանց՝ ազգային-եկեղեցական խնդիրների լուծմանը տալով խորհրդային ֆոն:

Զրուցի արձանագրությունն ակավում է այսպիսի տողերով. «Այն բանից հետո, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը ներկայացավ ընկ. Բովգանինին, նա դիմեց նրան շնորհավորական խոսքերով՝ ոռուերեն լեզվով. «Ես կցանկանայի, - ասաց Կաթողիկոսը, - խոսել մեզ՝ հայերին համար հաճելի ոռուերեն լեզվով, բայց, ցավոք, ես առաջմն դեռ չեմ տիրապետում ոռուերեն լեզվին»¹⁵:

Վազգեն Առաջինն ապա ավելացնում է. «Ես կուտումնասիրեմ այդ լեզուն»: Առաջ ընկնելով ասենք, որ նա իր խոստում կատարում է շատ կարճ ժամկետում:

Այնուժան Վեհափառ հայտարարում է, որ ինքը երկրորդ անգամ է հանդիպում Բովգանինին: Որ առաջին հանդիպումը կայացել է անցյալ տարի Ռումինիայում, երբ Բովգանինը կանգ է առել Բովսարեստում, Հարավալավիայից Խորհրդային Միություն վերադարձիս: «Մեր հանդիպման հաջորդ օրը, - ասում է Կաթողիկոսը, - Բովսարեստի ողջ հայկական համայնքը ուրախությամբ իմացավ այն մասին, որ ես սեղմել եմ Ձեր ձեռքը: Եվ այսօր ես դարձալ սեղմում եմ Ձեր ձեռքը և իմ կողքին զգում եմ ողջ Բայ ժողովորդին, որն իսկ հետ միասին մի անգամ ևս շնորհակալություն է հայտնում Ձեզ այն բանի համար, որ Դուք իսկ ընդունեցիք»¹⁶:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գրուցի այն մասը, երբ Բովգանինը, ասես ի միջի այլոց, հարցնում է Վազգեն Առաջինին. «Երբ փետրվար ամսին Դուք դիմեցիք Ձեզ ընդունելու խնդրանքով, իսկ ես առաջարկեցի ընդունելությունը տեղափոխել

¹³ Նույն տեղում, գ. 110, թ. 1:

¹⁴ Նույն տեղում, գ. 113, թ. 6-13:

¹⁵ Նույն տեղում, թ. 6:

¹⁶ Նույն տեղում:

Զեր՝ արտասահմանից վերադառնալուց հետո, ապա ի՞նչ եք Դուք կարծում այժմ, մենք ճիշտ վարվեցինք, որ տեղափոխեցինք ընդունելությունը»¹⁷:

Կաթողիկոսը պատասխանում է, որ դա շատ իմաստուն խորհուրդ էր և բացարձակապես ճիշտ, ինչ համար ինքը շնորհակալություն է հայտնում: Վազգեն Առաջին միանգամայն անկեղծ էր իր պատասխանում: Իրոք, ընդունելության հետագույնը չափազանց օգտավետ և ձեռնուու էր Կաթողիկոսին, քանի որ, ինչպես ինքը էր բացատրում Բուզգանի-պահ, ամեն ինչից բացի, հնարավորությունը ընձեռեց իրեն ուսումնասիրելու ավյուղաբայցան տրամադրությունները և փոխանցել այն ԽՍՀՄ կառավարության նախագահին, ինչը չէր կարող կատարել այն ժամանակ՝ փետրվար ամսին:

Հանդիպման ժնան սկզբուն Վազգեն Առաջինը Բուզգանին է հանձնում երկու նամակ-ուղերձ: «Դրանցից մեկը,- ասում է Կաթողիկոսը,- ես գրել եմ արտասահման մեկնելուց առաջ: Նրանում ես առաջ եմ քաշում մի շարք խնդրանքներ և խնդրում եմ Միութենական կառավարությանը օգնել Հայկական Եկեղեցուն այդ խնդրանքների դրական լուծման գործում: Երկրորդը՝ ես կազմել եմ հապեճակ, արտասահմանից վերադառնալուց հետո, վերջին 2-3 օրում: Այդ փաստաթյուրում ես աշխատել եմ շարադրել արտասահմանի հայության խոհերն ու ձգուումները և Խորհրդային կառավարության ուշադրությանը մերկայացնել մի քանի հարցեր, որոնք ինձ գոյնապես հուզում են»¹⁸:

Մեր համոզմամբ, երկրորդ համակը Վազգեն Առաջինը գոյնապես կազմել էր արտասահմանյան ուղևորությունից առաջ և գրաքննությունից ու իշխանությունների միջամտությունից զերծ պահելու նպատակով հրապարակ չէր համել: Ցավոք, այդ համակը մեզ չհաջողվեց հայտնաբերել Հայաստանի արխիվներում: Բայց, բարեբախտաբար, զրա հիմնական բովանդակությունը մանրամասնված է պարապանված մեկ այլ փաստաթյուրում Բուզգանին մետ Կաթողիկոսի գրուցի վերը նշված արձանագրությունում, որից պարզ է դասում երկրորդ համակի ծնունդի բուն շարժադիրը: Զերծ գրաքննությունից ու Վերահսկողությունից, զրանում Վազգեն Առաջինն ազատորեն շարադրել էր այն հարցերը, որոնք զրան չէր հաջողվել մերառել առաջին համակում, ավելի ստուգ՝ որոնք հանել էին զրա համակից գրաքննությունն իրականացնելու դրույթում: Նամակում արտացոլված էր ողջ հայությանը հուզող՝ հայկական պատմական տարածքների վերադարձման հիմնախնդիրը:

Կաթողիկոսը, ազգայնականության մեջ մեղադրանքներից ու պիտակներից խուսափելու համար, խնդիրը մերկայացնում էր՝ այն կապելով բացառապես սիյուռքահայության հետ: Եվ այս առումով էր, որ Վազգեն Առաջինի համար շահեկան էր Բուզգանին մետ հանդիպման հետագույնը:

Ինչ վերաբերում է Բուզգանին դիրքորոշմանը, ապա նա, ինչպես ինքը բացատրեց Վազգեն Առաջինն, այլ իմաստ էր դրել ընդունելությունը հետագելու մեջ: Նա գտնում էր, որ «Կաթողիկոսին մինչև զրա արտասահման մեկնելը ընդունելու դեպքում, դաշնակւերն այդ ընդունելությունը կօգտագործեն Կաթողիկոսի դեմ»¹⁹: Այսինքն, սիյուռքահա-

¹⁷ Նույն տեղում, թ. 11:

¹⁸ Նույն տեղում, թ. 7:

¹⁹ Նույն տեղում, թ. 12:

յության շրջանում հարցը կներկայացվեր այնպես, որ Խորհրդային ղեկավարությունը Հայոց Կաթողիկոսին ընդունել էր՝ նրան հրահանգավորելու նպատակով։ Պատահական չեր Բովզանին այս «խոստովանությունը»։ Այն միշտ էր, մի ավելորդ անգամ, ի սկզբանե խորհրդային իշխանությանը թշնամական քաղաքական ուժ դիտվող դաշնակցությանն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսին բարիկադների հակադիր կողմերում պահելու համար։

Վազգեն Առաջինի գրուցք Բովզանին իւս գնում էր նրան ներկայացված երկու նամակներում շոշափվող խնդիրների շուրջ։ Անտարակուս, ԽՍՀՄ կառավարության նախագահը քաջածանոթ էր Կաթողիկոսի առաջին նամակի բովզանիկությանը, որը, անկանաձ, նրան էր ուղարկվել ՀԵԳԽ-ի և ԿՊԳԽ-ի միշոցով նախապես, ինչը չեր կարելի ասել երկրորդ նամակի մասին, որն առանց այդ մարմինների գիտության էր հանձնվել Բովզանին։

Այնպես որ հանդիպման ժամանակ Բովզանին արդեն ուներ առաջին նամակում առաջարկված հարցերի պատրաստի պատասխանները։ Նա չեր կարող լավատեղյակ չի-նել նաև Ստալինի և Չորեցյանի՝ 1945 թ. հանդիպման մանրամասներին, արդյունքներին ու իւտևանքներին։ Այդ մասին չեր մոռացել իր առաջին նամակում նշելու Վազգեն Առաջինը։ Եվ, բնականաբար, Բովզանինը պետք է աշխատեր, որքան էլ անհարիր թվային Կաթողիկոսի առաջարած հարցերը, առնվազը մի քայլ առաջ անցնել Ստալինից։ Կաթողիկոսին ընդառաջելու, թեկուզ և զուտ ցուցադրական մղումի մեջ։ Այլապես ինչ տարբերություն բռնապետի և բռնապետությունը բարեփոխելու կարգախոսներով քաղաքական ասպարեզ մտած ԽՍՀՄ նոր ղեկավարության միջև։

Ժամանակին Ստալինի «բարյացակամությունը» Հայ Եկեղեցու կարիքների նկատմամբ թեկադրված էր զլիսպորապես երկու գործոնով։

ա) Հայրենական մեծ պատերազմում թշնամու նկատմամբ հաղթանակը կոփելու գործում Հայ Եկեղեցու զգայի օժանդակությամբ;

բ) Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ներկայացնելու բարենպաստ քաղաքական իրադրությունը ի շահս օգտագործելու ձգտումով։

Բովզանին պարագայում, Ամենայն Հայոց Հայրապետի գրեթե գրկարաց ընդունելության շարժիչ ուժը փոքր-ինչ այլ էր, չնայած դարձյալ թեկադրված էր, անշուշտ, ժամանակի հրամայականով։

ա) Ստալինյան քաղաքական կլիման բարեփոխելու տպավորություն ստեղծելու ձգտումը;

բ) Միջազգային հանրությանը ժողովրդավարական լուսապսակով երևալու խրուշչովյան վարչակազմի ցանկությունը։

Հանդիպման և զրոյացի արդյունքում Վազգեն Առաջինի առաջին նամակում արծածված էջմիածնին հուզող խնդիրներից ոչ մեկը չմերժվեց։ Դրանց մեծ մասն անհապաղ լուծելու, իսկ մնացած հարցերն ուսումնասիրելու և դրանց լուծմանը ընդառաջելու միանշանակ խոստումներ տրվեցին։

Հայաստանի ազգային արխիվում պահպանված Կաթողիկոսի առաջին նամակի բարյին համարժեք պատճենում, բարձրացված բոլոր հարցերի դիմաց՝ լուսանցքում թափանքով ուսերեն “Յա” («կողմ», «համաձայն») նշում կա արված, ամենայն հավանակա-

մությամբ թենց զրովցի ընթացքում գրված Գրիգորյանի ձեռքով: Դրանց թվում էին նաև այն հարցերը, որոնք նույն միանշանակությամբ խոստացել էր լուծել Առաջնորդ՝ պետության միամբնեամ ղեկավարը, որի բերանից դրվու եկած խոսքը, ինչպես հայտնի է, ենթակա էր անվերապահ և անհապաղ կատարման, ել ուր մասց գրավոր խոսքը: Այդ պարադոքը պետք է լուծվեր, բայց չլուծվեց, որը պարզ բացատրություն ունի: Ստալինն ինքն անձամբ չէր կամեցել դրանք լուծված տեսմեն, խոստացել էր առերես, բայց չէր պատրաստվում լուծել գործնականում, ստալինյան այնքան բնորոշ նենաց հնարանքներից մենք, որին իր քաղաքական կարիերայի ընթացքում նա դիմել էր բազում անգամներ:

Բոլգանինը Ստալինից ժառանգված հարցերի մասին հայտարարեց. «ԽՍՀՄ Միջին տըրմերի սովորի 1945 թվականի կարգադրությունը մենք կյանքի կողչենք»²⁰:

Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի փոխադրձ կապն ուժեղացնելու հարցի մասին նա ասաց. «Դա լիովին համապատասխանում է մեր Անդրադարձական կորուսն: Հետևաբար այդ հարցը կրավարարվի»²¹:

Եպիսկոպոսաց ամենամյա և նինաց տարին մենք Ազգային-Եկեղեցական ժողով անցկացնելու թույլտվություն տալու մասին, ասկեց. «Որա դեմ Խորհրդային կառավարության կողմից առարկություն չի լինի, ընդհակառակը, եթե այդ ժողովները հրավիրելու համար Հայկական Եկեղեցուն պետք լինի ինչ-որ բանով օգնել, ապա այդ օգնությունը միշտ ցուց կտա Խորհրդային կառավարությունը»²²:

Այլ էր Բոլգանինի վերաբերմուճքը երկրորդ նամակում պարունակած հիմնախնդիրների նկատմամբ, որոնք, ինչպես նշվեց վերևում, ըստ Կաթողիկոսի արտահայտում էին «ափյուռքահայության տրամադրությունները»: Այնինչ դրանք Հայ դասի հիմնական բաղկացուցիչներն էին, որոնց լուծման մեջ կենսականորեն շահագործված էր համայն հայությունը՝ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայունիքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԽՍՀՄ կառավարության առջև հարց էր բարձրացնում քայլեր ձեռնարկել:

ա) Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հայկական այն տարածքները, որոնք գտնվում էին Թուրքիայում, ինչպես նաև Խորհրդային Միությունում:

բ) Կազմակերպելու ափյուռքահայերի նոր հայրենադարձություն:

Կաթողիկոսը նախկին վիդրի հաշվառմամբ, խելամտորեն, հայկական հողերը վերադարձելու և ափյուռքահայերի նոր Անդրգաղթի կազմակերպման հարցերը ներկայացնում էր շահկապված, մեկը բխեցնելով մյուսից, ճիշտ այնպես, ինչպես Ստալինը դրանից տարի առաջ իրականացնում էր ափյուռքահայերի զանգվածային հայրենադարձություն՝ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ առաջադրելու հիմքեր ստեղծելու նպատակով:

Կիսելով այս մասին իր հաշվեկշռված մտածումները Բոլգանինի հետ, Վազգեն Առաջինը շեշտում էր, որ նոր հայրենադարձությունը նախընթացի համեմատությամբ ավելի

²⁰ Նույն տեղում, թ. 7:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

լավ և կազմակերպված անցկացնելու համար՝ «... հարկավոր է նախապես լուծել երեք խնդիր».

Որոշել այն տերիտորիան, որտեղ պետք է տեղափորվեն հայրենադարձները,

Ապահովել բոլոր հայրենադարձներին բռակարանով:

Նախօրոք ամեն ինչ նախապատրաստել նրանց աշխատանքով ապահովելու համար»²³:

Խորհրդային իշխանությանների համաձայնությունն ու աջակցությունը ձեռք բերելու համար, կաթողիկոսը դիմում է հնարավոր բոլոր միջոցների՝ բարենպատ գումարով ներկայացնելու բախսորոշ այս խնդիրը: Նա հավատացնում է, որ, գտնվելով արտասահմանում, գրուցել է բազմաթիվ հայերի հետ, որ արտերկրի հայկական կազմակերպությունները պատրաստ են ներգաղթի հետ կապված բոլոր ծախսերը հոգալու: Ինչ վերաբերում է մնացյալ խնդիրներին և ամենից առաջ նրանց տեղափորմանը, անշուշտ, դրանք պետք է իր վրա վերցներ Խորհրդային կառավարությունը:

«Երբ ես նկատի եմ ունենում վերը նշված երեք հիմնախնդիրները, շարունակում է իր միտքը Վեհափառը, - ապա, մասնավորապես, ես ցանկանում եմ հատկապես ծանրանալ առաջին հիմնախնդիրի վրա, որն առնվազում է տերիտորիային: Հենց տերիտորիայի հետ են սերտորեն կապված երկու հարցերը իմ երկրորդ փաստաթղթում, քանի որ տերիտորիան, որի մասին ես խոսում եմ այդ փաստաթղթում, կարող է վճռել որոշ թվով հայերի այստեղ տեղավորելու հարցը»²⁴:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անտարակուս, չէր կարող չհասկանալ, որ իր երկրորդ նամակում առաջ քաշված հիմնախնդիրները չեն կարող անմիջապես լուծվել: Բայց շարունակելով իր նախորդների գործը, նպատակ ուներ «տաք» վիճակում պահել դրանք, թույլ չտալ մոռացության մատնվելու և երբ գար հարմար պահը, իսկ նա շատերի հնան հավատում էր, որ վերջիվերջո այդ պահը գալու է, այդ խնդիրների քաղաքական լուծումը ապահովելու կոչված իրավասու պետական այրերը պատրաստ լինեին դրան, հանկարծակի չգային և համարձակություն ունենային բախսորոշ վճիռ կայացնելու: Եվ երբ Բուզգանինը, ինչպես և սպասվում էր, կտրուկ չմերժելով հանձերձ Կաթողիկոսին, կասկած է հայտնում ներկա պահին այդ հարցերը բարձրացնելու և լուծելու նպատակահարմարության մասին, Վազգեն Առաջինն անկեղծորեն պատասխանում է, որ ինքն իր պարտքն է համարում այդ ամենի մասին գրել՝ ամեննին չմտածելով, որ այդ հարցերը կարող են արագ լուծվել: «Ես գիտեմ այդ հարցերի բարդությունը, - ասում է նա, - և գրել եմ այն հաշվով, որ Զեր ուշադրությունը դարձնեմ այդ հարցերի վրա: Ես ուզում եմ հուսալ, որ երբ հնարավորություն ընձեռվի, Միութենական կառավարությունն անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնի այդ հարցերի լուծման համար»²⁵:

Կաթողիկոսի մարզարեական կանխատեսումը իրականացավ 32 տարի անց: 1988-ին ստեղծվեց այդպիսի հնարավորություն՝ սահմանադրական նանապարհով լուծելու Հայ

²³ Նույն տեղում, թ. 3-4:

²⁴ Նույն տեղում, թ. 4:

²⁵ Նույն տեղում, թ. 5:

դատի մի կմճիռը՝ Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Սակայն խորհրդային հասարակության «արմատական» վերակառուցմանը ձեռնամուկն եղած գորբաշուվան վերնախավը ոչ միայն քաղաքական իմաստություն ու համարձակություն չունեցավ մեկընդհիշու վճռելու այն, այլև իրարամերժ ու շփոթ որոշումներով խոր ու անլուծելի փակուղի մտցրեց խնդիրը:

«Ես համարում եմ, - ասում է Վազգեն Առաջինը Բուզգամինի հետ հանդիպման ավարտին, - այս օրը պատմական է մեր Եկեղեցու կյանքում, այն երախտագիտությամբ կիրշվի հայ ժողովրդի կողմից»²⁶: Դարձյալ ամկեղծ էր Վեհափառը: Չնայած իր նախորդի դառը փորձին, նա ուզում էր հավատալ խորհրդային նոր ղեկավարության և Հայ Եկեղեցու փոխհարաբերությունների բարեկավման խոստումնալից ակզրի հաջող վերջավորության ու հետագա զարգացմանը: Նա անզամ ոգևորված էր: Եվ ինչպես կարելի էր չոգևորվել գերտերության կառավարության նախագամի հրաժեշտի քաջակերիչ չերմ խոսքերից: Բուզգամինը համոզվածություն հայտնեց, որ սա վերջին ընդունելությունը չէ, և առաջարկեց Կաթողիկոսին, Վեհափառ դիմել խորհրդային կառավարությանը, եթե առաջանան ինչ-ինչ նոր հարցեր:

Հանդիպումից հետո նոր հարցեր, իհարկե, առաջացան: Բայց դրանց լուծումը մեծապես կախված էր ինը հարցերի լուծումից, որոնք, սակայն, անլուծելի էին մնացել:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ ղեկավարության հետ նոր հանդիպումների անհրաժեշտություն առաջանալու դեպքում, առանց երկմտելու խորհրդային կառավարությանը դիմելու Բուզգամինի բարի խորհրդին, ապա դա նույնականացնելով: Վազգեն Առաջինի համակներն ու դիմումները՝ հանդիպելու ԽՍՀՄ կառավարության նոր նախագամի Ն. Ս. Խորոշչովի հետ, որը միաժամանակ գլխավորում էր ԽՄԿԿ կենտրոնը, ոչ մի արդյունքի շիացըթեցին:

Ամենայն Հայոց Հայրապետը կանգնում է ամեղանելի նույն խաղորհ առջև, որի առաջ մեկ տաճամյակ առաջ կանգնելի էր իր նախորդը: Ի՞նչ անել, եթե չնա կատարվում անգամ գերհզոր տերության առաջին դեմքերի խոստումները: Իսկ եթք դարձյալ նույնն էր, միակը: Պետք էր շարունակել պայքարը և ինչ գնով էլ լինի հասնել տրված խոստումների կատարմանը: Ինչ գնով լինի՝ շարունակել բարձրացնել հայկական հողերի վերադարձման խղճադիրը, այն չմատնել մոռացության: Հիանթափած, հուսախարված լինելով, շիուսահատվել:

Պատմությունը դարձյալ կրկնվում էր: